դպրոցի տնօրեն /Ս. Նազարյան/

ՀՀ Լոռու մարզ

Ստեփանավանի N 2 դպրոցի 3-րդ <<բ>> դասարանի դասվարի
աշխատանքային տարեկան ծրագիր

2022-2023 ուստարի

Դասվար՝ Հ. Նազարյան

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

Աշակերտների համար պետք է ստեղծել բարենպաստ միջավայր, համապատասխան պայմաններ՝ ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար: Երեխաների մեջ խորացնել սերը ուսման, դպրոցի, գրքի և գրականության նկատմամբ: Դաստիարակել աշխատասիրություն, պարտաճանաչություն և պատասխանատվություն, բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի, շրջակա միջավայրի նկատմամբ: Խաղը և զվարճանքը դարձնել ուսումնական գործընթացի մի մասը, ինչն ավելի դյուրին կդարձնի գիտելիք ստանալու պրոցեսը: Սովորեցնել գնահատել սեփական արարքները, շտկել թերությունները: Սերմանել հարգանք մեծերի նկատմամբ, սովորեցնել համագործակցել ընկերների հետ, ուշադիր և հոգատար լինել ծնողների, ընտանիքի անդամների, իրենցից փոքրերի հանդեպ:

Հոգևոր դաստիարակություն

Թանգարան բաց երկնքի տակ

- Անգիր իմանալ ՀՀ օրհներգը, ճանաչել զինանշանը, դրոշը
- Ծանոթացնել Հայաստանի պատմությանը
- Հայ հերոս զավակները
- Աշխարհի առաջին քրիստոնյա պետությունը
- Զրույցներ հայրենասիրական թեմաներով
- Հայկական վանքեր, կոթողներ, հուշարձաններ

Գեղագիտական դաստիարակություն

Արվեստի հրաշք ուժը

- Գույների բազմազան աշխարհը
- Երաժշտությունն ու նրա մոգական ազդեցությունը
- Զրույցներ հայ անվանի նկարիչների, երգահանների մասին
- Արշավներ, էքսկուրսիաներ, թանգարաններ, ցուցահանդեսներ

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Լինենք միասնական

- Հայկական բանակի կազմավորումը
- Հայ ազատամարտիկների սխրանքները
- Ծանոթացնել բանակային կյանքին, առօրյային, կանոններին
- Զրույցներ հայրենասիրական թեմաներով

Ֆիզիկական դաստիարակություն

Լինենք առողջ և առույգ

- Կարևորել ամենօրյա մարմնամարզությունը
- Կազմակերպել արշավներ, պարբերաբար անցկացնել սպորտլանդիա,մրցումներ, շարժախաղեր՝ ֆիզկուլտուրայի դասաժամերին
- Զրույցներ՝ հայ մարզիկների, նրանց նվաճումների մասին

Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն

- Շաբաթօրակներ դպրոցի բակում, դասասենյակում, շրջակայքում
- Սահմանել ամենօրյա հերթապահություն
- Աշխատանք դպրոցի բանջարանոցում
- Բնապահպանություն, սենյակային բույսերի խնամք, զրույցներ

Բնապահպանական դաստիարակություն

Բնությունը մեր հարստությունն է

*Կազմակերպել արշավներ բնության գիրկը՝ սեր առաջացնելով բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ

* Էկոլոգիական մաքրությունը կարևոր է մեր ապագայի համար

Դպրոց – ընտանիք կապը

Ես սիրում եմ իմ դպրոցը

- Ծնողներին մասնակից դարձնել դպրոցական կյանքին
- Անցկացնել քննարկումներ, զրույցներ ծնողների հետ
- Այցելություն երեխաների տներ, ծանոթանալ նրանց կենցաղին, պայմաններին, ապրելակերպին, սոցիալական վիճակին